

ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Բանալի բառեր – Մամիկոնյաններ, Արշակ Գ, Մանվել, Արտավազ, Համազասպ, «Գահնամակ», թագավորություն, պաշտոն, նախարարներ, սկզբնաղբյուրներ

Մանվել Մամիկոնյանը Մեծ Հայքում իր խնամակալության ժամանակահատվածում՝ 378-385 թթ.¹, կարողացավ կողմնորոշվել աշխարհաքաղաքական բարդ պայմաններում, որդեգրելով մերթ պարսկական, մերթ հռոմեական դիրքորոշում՝ երկիրը մեծավ մասամբ գերծ պահեց արտաքին վտանգներից: Սակայն նրա մահից հետո Արշակ Գ-ն, որն իր ապաշնորհ կառավարման հետևանքով հարուցել էր նախարարների մեծ մասի դժգոհությունը, ակամա դարձավ երկրի տրոհման պատճառը: Ինչպես հաղորդում է Փավստոս Բուզանդը, «Բազումք ի Հայոց նախարարացն անտի ելին զատեան գնացին առ թագաւորն Պարսից. և մատնեցին նմա զաշխարհն Հայոց և ինդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի»²: Նախարարները, անտեղյակ լինելով առ այն, որ թե՛ պարսից և թե՛ հռոմեական արքունիքներում արդեն հասունացել էր Մեծ Հայքի բաժանման գաղափարը³, փաստորեն ակամա օգնում էին Պարսկաստանին և Հռոմեական կայսրությանը, որը 395 թ. բաժանվել է երկու մասի (արևելյան մասը կոչվել է Բյուզանդիա)՝ իրականացնելու իրենց ծրագրերը: Օգտվելով առիթից պարսից արքունիքը «ընդառաջեց» նախարարների խնդրանքին՝ Պարսկաստանում գտնվող Արշակունի Խոսրովին ուղարկելով Հայաստան, իսկ Արշակ Գ-ն, տեսնելով, որ չի կարող դիմադրել գահի նոր թեկնածուին, հեռացավ Մեծ Հայքի արևմտյան շրջանները⁴, և դրանով իսկ փաստացի հիմք դրվեց երկրի բաժանմանը, ինչն իրա-

¹ Մանվել Մամիկոնյանի գործունեության մասին տե՛ս **Վարդանյան Ա.**, Մանվել Մամիկոնյանը Մեծ Հայքի թագավորության խնամակալ և կառավարիչ // «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, 2020, թիվ 1, էջ 62-69:

² Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունները և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ **Փավստոս Բուզանդ**), Երևան, 1987, էջ 398: Տե՛ս նաև **Ղազարայ Փարպեցոյ** Պատմութիւն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի (այսուհետև՝ **Ղազար Փարպեցի**), Երևան, 1982, էջ 18:

³ Տե՛ս **Գիւտերբոգ Կ.**, Հռովմեական Հայաստան եւ Հռովմեական սատրապութիւնները Դ-Չ դարերուն, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մկրտիչ Վ. Նորշուան, Վիեննա, 1914, էջ 16-17:

⁴ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 398, 400:

վաբանորեն ամրագրվեց 387 թ.¹:

Հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում սկզբնաղբյուրները տարբեր իրադարձությունների առիթով հիշատակում են Սամվել, Արտավազդ և Համազասպ Մամիկոնյաններին: 368-370 թթ. պարսկական արշավանքի ժամանակ, երբ վճռվում էր Արշակունյաց թագավորության ճակատագիրը, Սամվել Մամիկոնյանը ոչ միայն չդարձավ իր հոր՝ պարսկական կողմնորոշման պարագլուխ Վահան Մամիկոնյանի գործակիցը, այլև «սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիգդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապիոյ Պարսից թագաւորին. և ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց»² ազատագրելով Հայաստանը պարսից արքայի ձեռքին կուրորեն գործիք դարձած Մամիկոնյան իշխանից:

Հետագայում՝ Պապի (369-374) և Վարազդատի (374-378) կառավարման շրջանում, սկզբնաղբյուրները Սամվել Մամիկոնյանի մասին տեղեկություններ չեն հաղորդում, նրան ակտիվ գործունեության մեջ տեսնում ենք 387 թ. Հայաստանի առաջին բաժանման ժամանակահատվածում, Արշակ Գ-ի եռանդուն կողմնակիցների շարքում: Ինչպես նկատել է Հ. Բարթիկյանը, երբ Խոսրով թագավորը սպարապետության պաշտոնը տվեց Սահակ Բագրատունուն, Արշակունիների շրջանում շուրջ մեկ հարյուրամյակ (բացառությամբ Բատ Սահառունու դեպքի) սպարապետության գործակալությունը գլխավորող Մամիկոնյաններն Արշակ արքայի կողմն անցան³: Արևմտյան հատվածի նախարարները, որոնք տիրոջներ ունեին Արևելյան Հայաստանում, տեսնելով, որ, ի տարբերություն Արշակ Գ-ի, Խոսրովը եռանդուն և գործունյա թագավոր է, փորձեցին անցնել նրա տիրապետության տակ: Ըստ Մովսես Խորենացու՝ երբ Արշակ Գ-ն իր գանձերն Անի ամրոցից տեղափոխում էր Ծովք, «Սուրենայ Խոռխոռունոյ և Վահանայ Առաւելենի և Աշխադարայ Դիմաքսենի գտեալ ժամ պատեհ..., զոր յափշտակեալ և կամեցեալ անցանել առ Խոսրով՝ ոչ ժամանեցին: Քանզի աճապարեալ Սամուելի Մամիկոնենի մտերիմ Արշակայ, յոլովաձեռն գնդաւ զհետ մտեալ՝ փախստեայս

¹ Մեծ Հայքի առաջին բաժանման թվականի վերաբերյալ տե՛ս **Երեմյան Ս.**, Մեծ Հայքի թագավորության տրոհումն ու անկումը // Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 112, ծան. 2:

² **Փավստոս Բուզանդ**, էջ 276: Ի տարբերություն Փավստոս Բուզանդի՝ Մովսես Խորենացին և Թովմա Արծրունին որպես Սամվելի մայր հիշատակում են Տաճատուհուն, որն Արծրունյաց տոհմից էր: Տե՛ս **Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւն Մ. Աբեղեանի եւ Մ. Յարութիւնեանի (այսուհետև՝ **Մովսես Խորենացի**), Երևան, 1991, էջ 379, **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, բնագիրը հրատարակության նախապատրաստեց Վ. Վարդանյանը (այսուհետև՝ **Թովմա Արծրունի և Անանուն**), Երևան, 1985, էջ 106):

³ Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Առաջին Մամիկոնյանները բյուզանդական արքունիքում // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ») 1986, թիվ 3, էջ 12:

արկան է յամուր այրս ի գաւառին Մանանադոյ»¹: Վերջիվերջո Սահակ Բագրատունու շնորհիվ փախստականներին հաջողվում է թագավորական գանձը հասցնել Խոսրովին, որի պատճառով հայկական երկու թագավորությունների միջև ծագում է պատերազմ, ինչն ավարտվում է Արշակ Գ-ի պարտությամբ, որից հետո՝ կարճ ժամանակ անց, նա մահանում է², իսկ թագավորությունը վերանում:

Արևմտահայկական թագավորության կործանումից հետո հաշտվելու մտադրությամբ նամակագրություն է սկսվում նախարարների և Խոսրով Վերջինի միջև, և ինչպես նկատել է Վ. Իսկանյանը, Արևելյան Հայաստանում շարունակվում է Արշակունիների գահակալումը, քանզի օտարերկրյա ճնշումն այստեղ դեռևս այնպիսի անսանձ բնույթ չէր կրում, ինչպես Արևմտյան Հայաստանում³, և այդ իսկ պատճառով նախարարները վերադարձան Արևելահայկական թագավորություն: Սակայն Սամվել Մամիկոնյանը կարողացավ «յինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու և զպատճէն թղթոյն նախարարացն՝ զատուցեալ ի նոցանէ գնաց առ կայսրն Արկադ: Քանզի էր սպանեալ նորա զհայր իւր Վարդան (Վահան – Վ. Ա.) յաղագս ուրացութեանն, և զմայր իւր Տաճատուրիի, և երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց՝ ոչ իշխէր զատչել ի Յունաց»⁴: Վերը նշված դեպքերը տեղի են ունեցել ոչ թե Արշակ Գ-ի մահից անմիջապես հետո, այլ որոշ ժամանակ անց, քանի որ ըստ Մովսես Խորենացու՝ Սամվել Մամիկոնյանը դիմել էր Արկադիոս կայսերը⁵, որը կառավարել է 395-408 թթ.: Մամիկոնյան իշխանը կայսերական արքունիքում ընդունվել է բարեկամաբար, և նրա ընտանիքի անդամները Բյուզանդիայում հետագայում ունեցել են բարձր պաշտոններ, մասնավորապես որդին՝ Մուշեղը, կայսեր պրեպոզիտոսն (սենեկապետ) էր⁶: Արշակունյաց թագավորության կործանումից հետո Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչները զանազան հանգամանքների հետևանքով և տարբեր ժամանակահատվածներում հաստատվել են Բյուզանդիայում⁷: 571-572 թթ. ապսամբությունից հետո իրենց ընտանիքներով այնտեղ

¹ Մովսես Խորենացի, էջ 314:

² Տե՛ս նույն տեղում, էջ 315-316:

³ Տե՛ս Իսկարյան Վ., Հայ-բյուզանդական հարաբերությունները IV-VII դդ., Երևան, 1991, էջ 57:

⁴ Մովսես Խորենացի, էջ 319:

⁵ Տե՛ս Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 13:

⁶ Տե՛ս նույն տեղում: Հ. Բարթիկյանը կարծիք է հայտնում, որ Մուշեղը Սամվելի կա՛մ որդին էր, կա՛մ եղբայրը (տե՛ս նույն տեղում, էջ 14), սակայն հավանական է, որ որդին էր, այլապես եղբոր դեպքում Փավստոս Բուզանդը նախ կհիշատակեր այդպիսի Մամիկոնյանի: Բացի այդ՝ նա ժամանակագրորեն ևս չէր կարող նրա եղբայրը լինել, քանի որ կայսերական սենեկապետ Մուշեղը իր գործունեությունը ծավալել է Թեոդոս II Փոքր կայսրի (408-450) կառավարման օրոք՝ մասնավորապես 420-430-ական թվականներին:

⁷ Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ գաղթականութեան, Գահիրե, 1941, էջ 143-208:

ապաստանել են Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները¹: Հետագա դարերում Մամիկոնյանները Բյուզանդիայում հասել են բարձրագույն պաշտոնների. Մանվել, Վարդ և Պետրոնաս Մամիկոնյանները գլխավորել են կայսերական զորաբանակները: Իսկ Թեոդորա Մամիկոնյանը (842-856) և նրա որդի Միքայել Գ-ն (856-867) զբաղեցրել են բյուզանդական գահը²:

IV դ. վերջին գործունեություն ծավալած հաջորդ Մամիկոնյանը, որին հիշատակում է Փավստոս Բուզանդը, Արտավազդն է՝ Վաչե Մամիկոնյանի որդին, որը մասնակցել է պարսիկների դեմ Չարեհավանի ավերակների մոտ տեղի ունեցած ճակատամարտին, և որտեղ նա, ըստ պատմիչի, իբր թե հանդիպել է Մերուծան Արծրունու տարբերանշանը կրող ինչ-որ մեկի. «Ապա զնշանն զնիզական պատեալ յարձակեցաւ ի վերայ նորա: Իսկ նա ընդ գիրկս մտեալ հարկանէր զայրն նետիւ, և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն ցամաք ընկենոյր զնա»³: Այստեղ Փավստոս Բուզանդը շփոթում է իրադարձությունների ժամանակագրությունը՝ Մերուծան Արծրունու գործունեությունը հասցնելով Մանվել Մամիկոնյանի խնամակալության օրերը: Ինչպես հայտնի է Մովսես Խորենացու հաղորդումից, որն ավելի արժանահավատ է և ընդունելություն է գտել ուսումնասիրողների շրջանում, Մերուծան Արծրունին մահապատժի է ենթարկվել 371 թ. Չիրավի ճակատամարտում՝ Սմբատ Բագրատունու հրամանով⁴, այլ ոչ թե սպանվել Չարեհավանի մարտում՝ Սյունյաց իշխան Բաբիկի ձեռքով⁵, ինչպես նշում է Փավստոս Բուզանդը: Իսկ ինչ վերաբերում է Արտավազդ Մամիկոնյանին, ապա նա մեծ քաջությամբ կռվել է պարսիկների դեմ այդ ճակատամարտում, որտեղ զոհվել է

¹ Տե՛ս **Պատմութիւն Մեքենայի**, աշխատությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 67, 68, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 8, «Ասորական աղբյուրներ», Ա, **Հովհան Եփեսացի**, թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելլոնյանի, Երևան, 1976, էջ 430-431, **Մելիքսեթ-Քեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, էջ 42, 79:

² Տե՛ս **Ադոնց Ն.**, Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա // **Ադոնց Ն.**, Երկեր, Պատմագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Երևան, 2006, էջ 281-366: Նրանց գործունեության վերաբերյալ մանրամասն տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 15, «Բյուզանդական աղբյուրներ», Ե, **Թեոփանեսի Շարունակող**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1990, էջ 53-54, 64-65, 99 և այլն:

³ **Փավստոս Բուզանդ**, էջ 388:

⁴ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 305: Վ. Վարդանյանը, հավատ չընծայելով Մովսես Խորենացու հաղորդմանը, համարում է, որ Մերուծան Արծրունին իր գործունեությունը շարունակել է մինչև Արշակ III Արշակունու գահակալման տարիները և սպանվել Բաբիկ Սյունու ձեռքով (տե՛ս **Վարդանյան Վ.**, Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, 2002, էջ 31-32):

⁵ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 386: Բ. Հարությունյանը, քննարկելով Արծրունյաց իշխանի գործունեությունը, հակված է վստահելու Պատմահոր տեղեկությանը, ըստ որի՝ Մերուծանն իր մահկանացուն կնքել է Չիրավի ճակատամարտում (տե՛ս **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 78):

նան հայրը՝ Մամիկոնյան նախկին տանուտեր Վաչեն¹: Արտավազը Մամիկոնյանի հետագա գործունեության վերաբերյալ սկզբնաղբյուրներում այլևս տեղեկություններ չկան:

Անկում ապրող Արշակունյաց թագավորության մայրամուտին հայտնի Մամիկոնյանը Համազասպն է: Մինչև նրա գործունեությանն անդրադառնալը փորձենք պարզել՝ նա տոհմի ավա՞գ, թե՛ կրտսեր ճյուղի ներկայացուցիչն էր: Թե՛ Փավստոս Բուզանդը և թե՛ Մովսես Խորենացին, անդրադառնալով Համազասպ Մամիկոնյանին, չեն նշում նրա հոր անունը: Համազասպի վերաբերյալ առաջին տեղեկությանը հանդիպում ենք Փավստոս Բուզանդի աշխատանքում: Ըստ պատմիչի², նա մասնակցել է 377 թ. Կարնո դաշտի ճակատամարտին, որտեղ փորձել է փրկել վիրավոր Գարեգին Ռշտունուն, քանի որ վերջինս Մամիկոնյանների փեսան էր՝ իր տոհմակից Համազասպուհու ամուսինը³, որը սպանվեց եղբոր՝ Վահան Մամիկոնյանի հրամանով Վանի միջնաբերդում⁴: Հետագա տասնամյակում՝ մինչև Համազասպ Մամիկոնյանի սպարապետ դառնալը, սկզբնաղբյուրները նրա վերաբերյալ տեղեկություններ չեն հաղորդում: Մեսրոպ Երեցի X դարում գրված աշխատության առաջին հրատարակությունում Համազասպը հիշատակվում է որպես սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի որդի. «Զորդի եղբոր իւրոյ քաջին Մուշեղայ զՀամազասպ»⁵, իսկ հետագա հրատարակություններում՝ իբրև Վասակ սպարապետի «գորդիսն զՄանուէլն և զԿոն և զՀամազասպ»⁶, ապա նաև՝ կաթողիկոս Սահակ Պարթևի փեսա: Նաև նշվում է. «Համազասպայ տեառն Մամիկոնի որդոյ Մանուէլի»⁷: Հակասությունն ակնհայտ է: Նախ նշենք, որ թե՛ ժամանակագրական առումով⁸ և թե՛ սկզբնաղբյուրների տեղե-

¹ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 388:

² Տե՛ս նույն տեղում, էջ 443, ծան. 208: Ստ. Մալխասյանցը բնագրում հիշատակվող Համազասպ անունն արհեստականորեն փոխել է Համազասպյան ազգանվամբ (տե՛ս նույն տեղում):

³ Տե՛ս նույն տեղում, էջ 370, ծան. 208:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 274, 370: Այս մասին տե՛ս **Վարդանյան Ա.**, Մամիկոնյանների գործունեությունը 338-368 թթ. // «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2020, թիվ 2, էջ 30-31, ծան. 58):

⁵ Տե՛ս **Մեսրոպ Երեց**, Պատմութիւն վարուց եւ մահւան երանելի առն Աստուծոյ Սրբոյն Մեծին Ներսէսի, Կ. Պոլիս, 1737, էջ 221:

⁶ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց Հայրապետի // «Սոփերք Հայկականք» (այսուհետև՝ «Սոփերք Հայկականք»), Զ, Վենետիկ, 1853, էջ 68: Տե՛ս Մեսրոպայ Երիցու Վայոցձորեցոյ Պատմութիւն Սրբոյն Ներսիսի Հայոց Հայրապետի // Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 705:

⁷ «Սոփերք Հայկականք», էջ 123:

⁸ Վասակ Մամիկոնյանը ծնվել էր 309-311 թթ. ժամանակահատվածում (տե՛ս **Համազասպյան Վ.**, Հայ ականավոր գորավար Վասակ Մամիկոնյան // ՅՄՄԹ Ժողովմտավետին կից պետական ձեռագրատուն (Մատենադարան), գիտական նյութերի ժողովածու, 1941, թիվ 1, էջ 228) և սպանվել 368 թ.: Ուստի նա չէր կարող 389 թ. երիտասարդ հասակում սպարապետության պաշտոնը զբաղեցրած Համազասպ Մամիկոնյանի հայրը լինել:

կություններից ելնելով՝ կարող ենք հավաստել, որ Համագասպը չէր կարող լինել Վասակի որդին, ինչպես նաև Մանվելը և Կոնը Վասակի որդիները չէին, նրանց հայրն Արտաշես Մամիկոնյանն էր: Այս մասին հստակ հաղորդում ունի Փավստոս Բուզանդը¹: Վերջինս, որն ավելի մոտ է իրադարձություններին, նաև հավելում է, որ Մանվելի որդիներն էին Հմայակն ու Արտաշիրը²:

Հետագա ուսումնասիրողները կա՛մ չեն անդրադարձել խնդրո առարկա հարցին, կա՛մ հայտնել են իրարամերժ տեսակետներ: Լեոն, հենվելով Մեսրոպ Վայոցճորեցու աշխատանքի առաջին հրատարակության վրա, հպանցիկ նշում է, որ Համագասպը Մուշեղ Մամիկոնյանի որդին էր³: Ն. Ադոնցը նշում է, որ Համագասպը Մանվել Մամիկոնյանի թոռն էր՝ Արտաշիրի որդին⁴: Նշանավոր հայագետի տեսակետը ընդունելի չէ այն պարզ պատճառով, որ Արտաշիրը և Համագասպը սերնդակիցներ էին, մասնավորապես տարեկիցներ, երբ Համագասպը 389 թ. դարձավ սպարապետ, միջին տարիքում էր, այլապես սպարապետությունը չէին կարող վստահել երիտասարդի: Իսկ Արտաշիրը, ինչպես վերը տեսանք, սպարապետությունը զբաղեցրել էր երիտասարդ հասակում, հոր՝ Մանվել Մամիկոնյանի մահից հետո, կարճ ժամանակահատվածում, մոտավորապես՝ 385-386 թթ. միջակայքում: Ինչպես վկայում են սկզբնաղբյուրների հեղինակները, նա ոչնչով աչքի չի ընկել, և նրա առավելությունը Մամիկոնյան մյուս իշխանների համեմատությամբ այն էր, որ նա Մանվել Մամիկոնյանի որդին էր: Համագասպի և Արտաշիրի հայրերը՝ համապատասխանաբար Մուշեղը և Մանվելը, նույն ժամանակահատվածում էին գործունեություն ծավալել, և վերջիվերջո Համագասպը չէր կարող լինել Մանվելի թոռը, առավել ևս իր հասակակից Արտաշիրի որդին⁵: Մեսրոպ Երեցի առաջին հաղորդումն առ այն, որ Համագասպը Մուշեղի որդին էր, ամբողջությամբ համապատասխանում է իրականությանը⁶: Անդրադառնալով Համագասպի և Սահականուշի ամուսնությանը՝ Հ. Արմենը, առանց սկզբնաղբյուրը վկայակոչելու, գտնում է, որ Համագասպը Մանվել

¹ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 364:

² Տե՛ս նույն տեղում, էջ 368:

³ Տե՛ս **Լեոն**, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1966, էջ 503:

⁴ Տե՛ս **Ադոնի Հ.**, *Армения в эпоху Юстиниана*, Ереван, 1971, с. 464, пр. 1:

⁵ Եթե հարցին մոտենանք ենթադրաբար, առանց սկզբնաղբյուրների փաստման, ապա առաջին հայացքից գայթակղիչ է այն տեսակետը, որ Համագասպը կրտսեր Վարդանի որդին էր՝ նահապետ Վարդան Մամիկոնյանի թոռը: Այդ տեսակետի օգտին է վկայում այն հանգամանքը, որ նախարարներն իրենց որդիներին մեծմասամբ անվանում էին հայրերի անուններով. Համագասպի ավագ որդին նույնպես կոչվում էր Վարդան, ինչը պնդում է նաև Գ. Գասպարյանը՝ ծանոթագրելով Բաբխու «Մանվել» վեպը (տե՛ս **Բաբխու**, Երկերի ժողովածու, հ. ութերորդ, Երևան, 1986, էջ 554-555, ծան. 11): Քանի որ այս հայեցակետը որևէ մատենագիտական հենք չունի, ուստի չենք կարող դա պնդել:

⁶ Լեոն նշում է, որ Համագասպի Մուշեղի որդի լինելու փաստը Մեսրոպ Երեցը քաղել է վստահելի սկզբնաղբյուրից: Տե՛ս **Լեոն**, նշվ. աշխ., էջ 503:

Մամիկոնյանի երրորդ որդին էր¹: Նմանատիպ տեսակետ է հայտնում նաև Վ. Վարդանյանը: Հղելով Ղազար Փարպեցուն՝ նա հպանցիկ նշում է Համագասպի՝ Մանվելի որդին լինելու հանգամանքը²: Մակայն այս պատմիչն այդպիսի տեղեկություն չի հաղորդում. Համագասպին անդրադառնում է միայն մեկ անգամ, երբ նշում է, որ կաթողիկոսն իր կալվածքները կտակեց թոռներին Համագասպի որդիներին³:

Վերջին շրջանում, այս կամ այն պատմական անձնավորության հետ կապված, Մամիկոնյանների ճյուղագրությանն անդրադարձած Վ. Եղիազարյանը նախ նշում է, որ Համագասպը Մանվելի որդին էր և Վասակի թոռը⁴: Ապա հաջորդիվ փորձելով տալ Մամիկոնյանների ճյուղագրությունը՝ նա Վասակ սպարապետի ժառանգների շարքում նշում է ոչ միայն Արտաշես Մամիկոնյանի որդիներին՝ Մանվելին և Կոնին, այլև Համագասպին⁵, թեպետ այդ մասին հաղորդումներ չունեն ո՛չ Փավստոս Բուզանդը, ո՛չ Մովսես Խորենացին: Ապա նա հիշատակում է իրական Համագասպին՝ Սահակ Պարթևի փեսա և Ավարայրի ապագա հերոս Վարդանի հորը որպես Մանվելի որդի⁶: Վ. Եղիազարյանը, չհամադրելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, նույն ժամանակահատվածում նույն տոհմում երկու Համագասպների է հիշատակում, ինչը հետագա դարերում ընդօրինակող գրիչներից մեկի կատարած ներմուծում է: Մակայն նշենք, որ նրանք նույն անձնավորությունն են, քանի որ IV դարի վերջին քառորդում Մամիկոնյաններից գործունեություն է ծավալել միայն Սահակ կաթողիկոսի փեսա Համագասպ Մամիկոնյանը:

Խոսքով Վերջինը, որը փորձում էր վերականգնել Արշակունյաց թագավորության նախկին փառքը, առաջ էր մղում ազգային նկարագիր ունեցող հոգևոր ու աշխարհիկ գործիչների, և այդ ճանապարհին թագավորի ջանքերով կաթողիկոս դարձավ Սահակ Պարթևը (388-439): Վերջինս, որ արու գավակ չունեք, իր միակ դստերը՝ Սահականուշին, կնության տվեց «Համագասպայ տեառն Մամիկոնեից և Հայոց սպարապետի»⁷: Ղազար Փարպեցու

¹ Տե՛ս **Արմեն Հ.**, Մարգպանը եւ սպարապետը, Լոս Անճելըս, 1952, էջ 77:

² Տե՛ս **Վարդանյան Վ.**, Հայոց եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում, Վաղարշապատ, 2005, էջ 180:

³ Տե՛ս **Ղազար Փարպեցի**, էջ 84:

⁴ **Մեսրոպ Վայոցձորեցի**, Մուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսեսի հայոց հայրապետի պատմությունը, թարգմանություն գրաբար բնագրից, առաջաբան և ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Վանաձոր, 2015, էջ 184, ծան. 368, **Եղիազարյան Վ.**, Մեսրոպ Մաշտոցը՝ Մամիկոնյան տոհմի ազնվական // «Էջմիածին», 2017, թիվ Ա, էջ 56:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 57, ծան. 41:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ **Ղազար Փարպեցի**, էջ 84: Բարձր ազնվականության դասի ներկայացուցիչի՝ կաթողիկոսի դստեր և Համագասպ Մամիկոնյանի ամուսնությունը թույլ է տալիս պնդել, որ վերջինս Մամիկոնյան տոհմում աստիճանակարգով ավագությամբ, ավելի բարձր դիրք ուներ իր տոհմակիցների նկատմամբ՝ լինելով Մուշեղի որդին և Վասակ սպարապետի թոռը: Այլապես Սա-

հաղորդումը վկայում է, որ Համագասպը Սահականուշի հետ ամուսնանալու ժամանակ արդեն սպարապետ էր: Մակայն Մովսես Խորենացին, որն անաչառ չէ Մամիկոնյանների գործունեությունը ներկայացնելիս, անկախ այն հանգամանքից՝ այդ գործիչները պարսկամե՞տ են, թե՞ բյուզանդամետ, նրանց մեծ ու փոքր գործերը վերագրում է ուրիշ տոհմերի ներկայացուցիչների, այլ հանգամանքներով ներկայացնում Համագասպի սպարապետ դառնալը: Ըստ Պատմահոր՝ երբ մահացել է Սահակ Բագրատունի սպարապետը, «ի տեղի նորա աղաչէր սուրբն Սահակ կարգել զնա Խոսրովայ արքայի, և զկնի կապանաց նորա՝ եղբոր նորա Վռամշապիոյ»¹: Երբ եղբայրները, վախենալով հարուցել պարսից թագավորի գայրությունը, հրաժարվել են Համագասպին նշանակել սպարապետ, Սահակ Պարթևը, օգտագործելով իր հեղինակությունը, դիմել է նրան²: Վերջինս հարգել է կաթողիկոսի խնդրանքը և հրամայել Վռամշապուհին. «զՀամագասպ կացուցես ի վերայ զօրացո սպարապետ՝ մեր հրամանաւ, և ազգի դորա տացես զգահն հինգերորդ՝ պատուոյ նախարարացո. և զգիւղս և զդաստակերտս, զոր տուեալ է նախնեացն քոց հարց դոցա՝ կալցին դոքա»³: Մինչև պատմիչի հաղորդմանն անդրադառնալը նշենք, որ Սահակ կաթողիկոսը Տիգրան էր մեկնել ոչ միայն իր փեսային սպարապետ կարգելու համար, այլև վավերացնելու վերամիավորված Հայաստանի⁴ կարևոր որոշիչներից մեկը՝ «Գահնամակը»⁵:

Պարսից արքայի՝ Վռամշապուհին ուղղված պատասխան թղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մամիկոնյանները մինչ այդ շնորհագրկված են եղել, իսկ նրանց կալվածքները՝ բռնագրավված, քանի որ Հայոց արքային հրամայվում էր Մամիկոնյաններին վերադարձնել այն դաստակերտներն ու գյուղերը, որոնք Վռամշապուհի նախնիները տվել էին Համագասպի հայրերին: Թե ինչ հանգամանքներում էին Մամիկոնյանները գրկվել իրենց կալվածքներից, սկզբնաղբյուրներում ուղղակի տեղեկություններ

հակ Պարթևն իր միակ ժառանգին և Լուսավորչի տան հսկայական կալվածքների ժառանգորդին չէր ամուսնացնի երկրորդական իշխանի հետ, թեկուզ նա լիներ Մամիկոնյան տոհմից:

¹ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 322:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 324:

⁴ Խոսրով Արշակունին, 388 թ. օգտագործելով քաղաքական բարենպաստ իրադրությունը, կարողացավ իր թագավորությանը միացնել Հայաստանի բյուզանդական հատվածը (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 319-320) և կարճ ժամանակով դառնալ վերամիավորված Մեծ Հայքի թագավոր: Մակայն, 408 թ. Թեոդոս Փոքր կայսրը (408-450) Վռամշապուհից հետ պահանջեց իր «մասնաբաժինը», և երկրի արևմտյան մասը վերջնականապես ընկավ բյուզանդական լծի տակ (տե՛ս նույն տեղում, էջ 328):

⁵ «Գահնամակը» ստեղծվել է Խոսրովի կողմից՝ վավերացնելու Հայաստանի 388 թ. վերամիավորումը: Տե՛ս **Հարությունյան Բ.**, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջ // «ՊԲՀ», 1976, թիվ 2, էջ 57-74, **Յակոբեան Ա.**, «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց հայոց». հետազոտություն եւ բնագիր // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII, Երևան, 2011, էջ 27-66):

չկան: Սակայն ուսումնասիրելով Մամիկոնյանների գործունեությունը IV դարի վերջին, ինչպես նաև նրանց հարաբերությունները վերջին Արշակունիների ու պարսից արքունիքի հետ՝ կարող ենք փաստել, որ նրանք իրենց տիրություններից հավանաբար զրկվել են Մամվել Մամիկոնյանի գործունեության հետևանքով: Ինչպես վերը նշել ենք, Խոսրովից դժգոհ Մամիկոնյաններն իրենց ժառանգական գործակալությունը՝ սպարապետությունը, Բագրատունիներին հանձնելու համար ոչ միայն մյուս նախարարների օրինակով չվերադարձան Հայաստանի արևելյան մաս, այլև Արշակունի գահակալը վերամիավորեց Հայաստանի երկու մասերը: Մամվել Մամիկոնյանին այլ բան չէր մնում, քան անձնական և քաղաքական շարժառիթներով լքել Հայաստանի արևմտյան հատվածը ևս, ապավինել կայսեր ողորմածությանը և վերջինիս հանձնել նախարարների ու արքայի նամակների պատճենները: Եվ հավանական է, որ զայրացած Խոսրով արքան Մամիկոնյանների տիրությունների մեծ մասը հարքունիս գրավեց, որի արդյունքում նրանք կարճ ժամանակով դուրս մղվեցին քաղաքական ասպարեզից:

Երբ պարսից արքա Վռամ IV Կրմանը (388-399) հաստատեց «Գահնամակը»¹, Մամիկոնյան տոհմը հայ նախարարների շարքում ստացավ հինգերորդ գահը: Այս առումով ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ 380-ական թվականներին Մամիկոնյաններին հայ նախարարական տոհմերի գահակարգում հինգերորդ տեղը հատկացնելը նախորդ տարիների շնորհագրկման արդյունք էր: Ժամանակաշրջանին այս կամ այն կերպ անդրադարձած գրեթե բոլոր ուսումնասիրողները պնդում են, որ Սահակ Պարթևի շնորհիվ Մամիկոնյանների՝ հայ նախարարների շարքում ստացած հինգերորդ գահը նրանց տոհմի՝ Հայաստանում զբաղեցրած դիրքի բարձրակետի սկիզբն էր: Ավելին, որոշ ուսումնասիրողներ, տուրք տալով Մովսես Խորենացու հակամամիկոնյան հաղորդումներին², զանց առնելով IV դարում տեղի ունեցած պատմական իրադարձությունները և դրանցում այդ տոհմի խաղացած նշանակալից դերը, նշում են, որ Մամիկոնյանների առաջին սպարապետը եղել է Համագասպ Մամիկոնյանը³: Նշենք, որ

¹ Տե՛ս **Адонн Н.**, նշվ. աշխ., էջ 249-250, **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ., էջ 58:

² Գր. Խալաթյանցը նույնպես, անդրադառնալով «Գահնամակում» Մամիկոնյանների զբաղեցրած տեղին, հավատ չի ընծայում Մովսես Խորենացու հաղորդմանը, գտնելով, որ նա ամեն կերպ փորձում է նսեմացնել նրանց նշանակությունը ու փառքը և փորձում է ցույց տալ, որ Մամիկոնյանները հինգերորդ գահը ստացան իրենց ազգական Սահակ կաթողիկոսի միջամտությամբ (տե՛ս **Խալաթեանց Գր.**, Հայ Արշակունիք ըստ Մովս. Խորենացույ կամ նոր ուսումնասիրություններ Մովս. Խորենացույ մասին, Վիեննա, 1906, էջ 101-102):

³ Տե՛ս **Սահակյան Ա.**, Մամիկոնյանների քաղաքական վերելքը և տոհմաբանական լեզենդը (V-VII դդ.) // «ԲԵՀ», 2016, թիվ 3, էջ 26, 33: Նմանատիպ տեսակետ է հայտնում նաև Հ. Դավթյանը՝ նշելով, որ IV դ. օրինական սպարապետներ են եղել Վասակը և Համագասպ Մամիկոնյանը (տե՛ս **Դավթյան Հ.**, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 277, 278, 284):

ամբողջ IV դարի ընթացքում Մամիկոնյան գոծիչները, անկախ իրենց քաղաքական հայացքներից, Հայաստանի քաղաքական կյանքում կարևորագույն դեր են կատարել՝ գլխավորելով գրեթե բոլոր օրհասական ճակատամարտերը՝ Արշակունիների թագավորությունում արքայից և կաթողիկոսից հետո լինելով երրորդ կարևորագույն անձը, իսկ կաթողիկոսի բացակայության դեպքում՝ երկրորդը: Տրդատ Գ-ի, Խոսրով Կոտակի օրերում պետության կարևորագույն անձիք էին Արտավազդը և նրա որդի Վաչե Մամիկոնյանները, Արշակի կառավարման տարիներին՝ Վասակը, հաջորդ գահակալի օրոք Մուշեղ Մամիկոնյանը մեծ դեր ուներ պետական կառավարման համակարգում, իսկ Մանվելը, ինչպես գիտենք, միանձնյա էր կառավարում Մեծ Հայքը: Վերը նշված ռազմական գործիչները վարում էին արքունի կարևորագույն գործակալությունը՝ սպարապետությունը. նրանց հրամանատարության տակ էր գտնվում Մեծ Հայքի ռազմական ուժերի զգալի մասը: Նրանք տիրապետում էին նշանակալից կալվածքների¹, բնականաբար հայ նախարարների շարքերում առաջնակարգ դիրք պետք է զբաղեցնեին, նույնիսկ ավելին, քան շնորհագրկումից հետո հաստատված «Գահնամակում» նրանց զբաղեցրած դիրքն էր: Իսկ «Գահնամակը» արտացոլում է Մամիկոնյանների դիրքերն Արշակունիների անկման շրջանում՝ 387 թ. Մեծ Հայքի բաժանումից հետո:

Համազասպ Մամիկոնյանի սպարապետության ժամանակահատվածը (389-415) համընկնում էր Վռամշապուհ արքայի (388-414) կառավարման շրջանին, երբ տարածաշրջանում տիրում էր խաղաղություն: Մամիկոնյան սպարապետը, ըստ Թովմա Արծրունու, զբաղեցնում էր «զմարգպանութիւն և զօրավարութիւն Հայոց»² պաշտոնը, և նրա մասին վերջին տեղեկությանը ծանոթանում ենք Արևելահայկական թագավորությունում պարսից արքայազն Շապուհի գահ բարձրանալու հանգամանքներով: Ինչպես հաղորդում է Մովսես Խորենացին, «քանզի մեռեալ Համազասպայ, և ի սգի մեծի եղեալ Սահակայ՝ ոչ ոք ի միաբանութիւն հաւաքեաց զգունդս Հայոց: Վասն որոյ դիրամուտ եղև յաշխարհս Շապուհ...»³: Պատմահայրը, որն անթաքույց հակակրանք ունի Մամիկոնյանների նկատմամբ, ակամա հաղորդում է, որ եթե կենդանի լիներ Համազասպ Մամիկոնյանը, ապա դժվար թե այդքան դյուրին լիներ Շապուհի՝ Արշակունյաց գահ բարձրանալը, եթե նույնիսկ նա պարսից գահի ժառանգորդն էր: Իսկ մյուս ավագ նախարարները, ոչինչ չձեռնարկելով, ինչպես միշտ համակերպվեցին պարսից արքայազնի տիրապետությանը:

Դրանից կարճ ժամանակ անց՝ 428 թ., կործանվելու էր նաև Արշակուն-

¹ IV դարում Մամիկոնյանների տիրապետության ներքո էին գտնվում Տարոնի մեծ մասը, Տայքը և Արագածոտնի մի շարք գավառներ: Տե՛ս **Վարդանյան Ա.**, Մամիկոնյան նախարարական տան տիրությունները // «Հայագիտության հարցեր», 2019, թիվ 1, էջ 18-33:

² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 116:

³ Մովսես Խորենացի, էջ 330:

յաց հարստությունը Մեծ Հայքի արևելյան մասում, և երկրում հաստատվելու էր մարզպանական համակարգ¹: Ամբողջ IV դարի ընթացքում Մամիկոնյանները, որոնց հեղինակությունն ու քաջությունն անառարկելի էին հայ ազնվականության շարքերում, պայքարեցին արտաքին վտանգի դեմ: Հաջորդ V դարում նույնպես այդ տոհմի ներկայացուցիչներն էին հիմնականում դառնալու ազատագրական շարժումների դրոշակակիրները, և նրանք պետք է տնօրինեին երկրի բախտը՝ փորձելով պահպանել նրա գոյությունը և ինքնուրույնությունը:

Արգիշտի Վարդանյան – Մամիկոնյանները վերջին Արշակունիների օրոք

385 թ.՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանի մահից հետո, հայ ռազմաքաղաքական վերնախավը պառակտվեց, ինչից օգտվելով՝ Հռոմը և Պարսկաստանը 387 թ. Մեծ Հայքը բաժանեցին միմյանց միջև: Մամիկոնյան իշխանական ընտանիքը ևս անմասն չէր կատարվող իրադարձություններում: Արշակունիների վերջին շրջանում հրապարակի վրա էին Մանվել, Արտավազդ և Համազասպ Մամիկոնյանները: Մանվել Մամիկոնյանը, որ Արշակ Գ-ի եռանդուն կողմնակիցն էր, նրա մահից հետո տեղափոխվեց Բյուզանդիա: Արտավազդ Մամիկոնյանը մասնակցեց Ջաբեհավանի ճակատամարտին, և վերջինիս գործունեության վերաբերյալ սկզբնաղբյուրներում այլ տեղեկություններ չկան: Համազասպ Մամիկոնյանը երկար տարիներ զբաղեցրեց Արևելահայկական թագավորության սպարապետության գործակալությունը (389-415)՝ փորձելով համախմբել նախարարական ցարքուցրիվ զինվորական ուժերը: Սակայն վերջիվերջո 428 թ. հայոց պետականությունը կործանվեց նաև Մեծ Հայքի արևելյան հասվածում:

Аргишти Варданян – Мамиконяны в период правления последних из Аршакидов

Ключевые слова – Мамиконяны, Самвел Мамиконян, Аршак III, Артавазд, Амазасп, Фавстос Бузанд, Саак Партев

В 385 г. после смерти спарапета Манвела Мамиконяна в армянской военно-политической элите произошел раскол, воспользовавшись которым, в 387 г. Рим и Персия разделили между собой Великую Армению. Правящая семья Мамиконянов также не осталась в стороне от происходящих событий. В последний период правления Аршакидов на политической арене оказались Самвел, Артавазд и Амазасп Мамиконяны. Самвел Мамиконян, который был ярым сторонником Аршака IV, после смерти последнего переехал в Византию. Артавазд Мамиконян принял участие в битве при Зарегаване, иных сведений о нем в первоисточниках не имеется. Амазасп Мамиконян долгие годы возглавлял спарапетство Восточноармянского царства (389-415), стараясь объединить разрозненные военные силы князей-нахараров. Однако в конце концов в 428 г. армянская государственность была утрачена также и в восточном секторе Великой Армении.

¹ Մասանյան Պարսկաստանի կողմից Այսրկովկասյան երկրներին պարտադրված մարզպանական համակարգի վերաբերյալ տե՛ս **Колесников А.**, О термине «марзбан» в Сасанидском Иране // Палестинский сборник, вып. 27, Ленинград, 1981, с. 49-56, **Хуршудян Э.**, Армения и Сасандский Иран (историко-культурологическое исследование), Алматы, 2003, с. 95-109:

Argishti Vardanyan – *The Mamikonyans under the Reign of the Arsacid Dynasty*

Key Words – *Mamikonians, Samvel Mamikonyan, Arshak III, Artavazd, Hamazasp, Pavstos Buzand, Sahak Partev*

In 385, after the death of Commander (Sparapet) Manvel Mamikonyan, the Armenian military-political elite split, taking advantage of which in 387 Rome and Persia divided Greater Armenia among themselves. The Mamikonian ruling family was actively involved in the events. Samvel, Artavazd and Hamazasp Mamikonyans were on the political arena during the last period of the Arsacid Dynasty. Samvel Mamikonyan, who was an ardent supporter of Arshak III, moved to Byzantium after his death. Artavazd Mamikonyan took part in the battle of Zarehavan, but there is no other information about the latter's activities in the historical sources. For many years Hamazasp Mamikonyan ruled the Military Department (Sparapetutyun) of the Eastern Armenian Kingdom (389-415), trying to unite the scattered ministerial military forces. But finally in 428, Armenian statehood was destroyed in the eastern part of Greater Armenia.

Ներկայացվել է 26.05.2021

Գրախոսվել է 28.05.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021